ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԱ-ՊԵԿ-ՊԸԾՁԲ-(16/2)-2 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով պարզեցված ընթացակարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար անշարժ գույքի գնահատման հետ կապված խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան

24 հոկտեմբերի 2016թ
ժամը 10:00

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Ա.Նարիմանյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Հ.Պողոսյանը, Գ.Թումանյանը, Ա.Գասպարյանը, Գ.Մանուկյանը, և քարտուղար Հ.Ղարիբյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և ուսումասիրման մասին

ՀՀԿԱ-ՊԵԿ-ՊԸԾՁԲ-(16/2)-2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ա. Նարիմանյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ են ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցների՝

	Մասնակցի անվանումը		
Հ/Հ	Երևանի «Ադամանդ» ապրանքա-հումքային բորսա ՓԲԸ ք. Երևան Ագաթանգեղոսի փող., 6/1 շենք	«Օրրան» ՍՊԸ ք. Երևան Տիգրան Մեծի պող., 4 շենք, 5-րդ հարկ, սեն.515	**Նախահաշվային գինը/ՀՀ դրամ/**
	Գնային առաջարկը առանց ԱԱՀ /ՀՀ դրամ/		
	ԱԱՀ չվճարող		
1	692 820	575 000	710 000

Հանձնաժողովը ուսումնասիրեց և արձանագրեց, որ՝

«Օրրան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 9-ը՝ վճարման պահանջագիրը վավերացված է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բայց էլեկտրոնային թվային ստորագրությունը դրված է էջի ներքևի մասում, այլ ոչ թե հրավերի՝ վճարման պահանջագրի լրացման կարգի համաձայն 18ա և 18բ դաշտերում:

«Երևանի «Ադամանդ» ապրանքա-հումքային բորսա» ՓԲԸ-ն նույնպես հավելված 9-ը՝ վճարման պահանջագիրում էլեկտրոնային թվային ստորագրությունը դրել է ներքևի մասում, միաժամանակ ստորագրելով և կնքելով 18ա և 18բ դաշտերը:

Ելնելով վերոգրյալից գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և պարզաբանման կարգով դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն:

Գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել ՀՀ ֆինանսների նախարարությունից պարզաբանում ստանալուն հաջորդող օրը՝ ժամը 09:30-ին:

Ընդունվել է՝ կողմ-5, դեմ 0

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Ա.Նարիմանյանը

անդամներ _____ Ա. Գասպարյան

_____ Հ. Պողոսյան

_____ Գ. Թումանյան

_____ Գ. Մանուկյան

քարտուղար _____ Հ. Ղարիբյան